ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-21-10/10-1

ք. Երևան «14» Մայիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջերմգազշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Քոչունցի, ով գործում է «Ջերմգազշին» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Ծառայության համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատուցված Ծառայությունների թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է **5,000,000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ, **ներառյալ ԱԱՀ**-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է **4 198 795 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ,**

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, որը կազմում է **4 665 327 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ,**

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ** վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ջերմգազշին» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ 1	ք.Երևան, Արին-բերդի 5-րդ նրբ. 1/1
ՀՀ ՖՆՆ գանձապետական կառավարություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011440[illegible]	Հ/Հ 1570004466230100
ՀՎՀՀ 02522[illegible]	ՀՎՀՀ 01236906
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Վ.ՔՈՉՈՒՆՑ

Հավելված N 1
ԳՀԾՁԲ-21-10/10-1 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/հ	CPV	անվանումը	չափման միավորը	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50531200/2	էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	5,000,000	1	ՀՀ ՊՆ զորամասեր	II-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 20,12,2021թ.-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ծառայության անվանումը, CPV կոդը	Ծառայության առանձին տեսակների անվանումները	Չափի միավորը	Միավորի պլանավորված գինը հազ.դրամ
Կաթսայատան ՀՁՍ ավտոմատ համակարգի սպասարկում, էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգում և պահպանում				
1	Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV կոդ՝ 50531200/2	Հոսքային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	8091.6
2		Ծավալային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	13084.8
3		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 5խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	11364
4		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 10խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	14438.4
5		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 30խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	18074.4
6		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 50խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	23706
7		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 80խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	28066.8
8		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 120խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	32419.2
9		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 180խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	38325.6
10		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 250խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	44228.4
11		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 350խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	51148.8
12		Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 500խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	61392
13		Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 80 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11350.8
14		Այլ սարքերի և սարքավորումների տեղադրում, խողովակի օդային գլխանցքի վրա /առանց սարքի արժեքի/	հատ	1184.4
15		Գազի գնդիկավոր, կոնաձև խցանավոր փականի տեղադրում, տրամագիծը 15-50մմ /առանց փականի արժեքի/	հատ	3232.8
16		Չափման և պաշտպանման սարքի մոնտաժում, միացնող ծայրերի քանակը մինչև 2 /առանց նյութերի արժեքի/	հատ	1184.4
17		Չափման և պաշտպանման սարքի մոնտաժում, միացնող ծայրերի քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	1874.4
18		Չափման և պաշտպանման սարքի մոնտաժում, միացնող ծայրերի քանակը մինչև 12 /առանց նյութերի արժեքի/	հատ	2943.6
19		Հպարկիչի մոնտաժում, սոլենոիդային շարժաբերի համար /առանց նյութերի արժեքի/	հատ	3835.2
20		Ապարատի/կոճակ,կառավարման բանալի, էլեկտրամագնիսային կողպեկի բլոկավորում, ձայնային ազդանշան,ազդանշանի լամպ/մոնտաժում,միացվող ծայրերի քանակը մինչև 2/առանց նյութերի արժեքի/	հատ	982.8
21		Ապարատի/կոճակ,կառավարման բանալի, էլեկտրամագնիսային կողպեկի բլոկավորում, ձայնային ազդանշան, ազդանշանի լամպ/ մոնտաժում, միացվող ծայրերի քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	1672.8
22		Ապարատի/կոճակ,կառավարման բանալի, էլեկտրամագնիսային կողպեկի բլոկավորում,ձայնային ազդանշան,ազդանշանի լամպ/մոնտաժում, միացվող ծայրերի քանակը մինչև 12/առանց նյութերի արժեքի/	հատ	2708.4
23		Սեղմակի տեղադրում, պատյանով /առանց նյութերի արժեքի/	հատ	619.2
24		Սեղմակի տեղադրում, առանց պատյանի /առանց նյութերի արժեքի/	հատ	543.6
25		Ազդանշանային բլոկավորող սարքի /սարքվածքի/ տեղադրում/առանց նյութերի արժեքի/	հատ	3542.4

26		Օդափոխման ագրեգատի տեղադրում, էլ շարժիչով, մինչև 25կգ քաշով /առանց նյութերի արժեքի/	հատ	4699.2
27		Օդափոխման ագրեգատի տեղադրում, էլ շարժիչով, մինչև 50կգ քաշով /առանց նյութերի արժեքի/	հատ	7087.2
28		Տուփախողովակների մոնտաժում կառուցատարրերով էլ. հաղորդալարերը և մալուխները անցկացնելու համար /առանց նյութերի արժեքի/	100մ	33884.4
29		Էլ. հաղորդալարի /մալուխի/ մոնտաժում վաքերում կամ տուփախողովակներում, մեկուսացված, գումարային կտր, մինչև 35քմմ /առանց նյութերի արժեքի/	100մ	25005.6
30		Էլ. հաղորդալարի /մալուխի/ մոնտաժում վաքերում կամ տուփախողովակներում, մեկուսացված, գումարային կտր, մինչև 120քմմ /առանց նյութերի արժեքի/	100մ	35203.2
31		Էլ.հաղորդալարի/մալուխի/մոնտաժում բաց հաղորդագիծ կառուցատարրերով /առանց նյութերի արժեքի/	100մ	26382
32		Էլ. հաղորդալարի /մալուխի/ մոնտաժում փակ հաղորդագիծ ակոսներում /առանց նյութերի արժեքի/	100մ	34356
33		Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ, անջատիչի տեղադրում կառուցատարրերի վրա, խզման հոսանքը մինչև 25Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	2758.8
34		Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ, անջատիչի տեղադրում կառուցատարրերի վրա, խզման հոսանքը մինչև 63Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	3195.6
35		Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ, անջատիչի տեղադրում կառուցատարրերի վրա, խզման հոսանքը մինչև 100Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	4695.6
36		Կառավարման կոճակի կամ կառավարման կետ մոնտաժում, տեղ, կառուցատարրերի վրա, կոճակների կամ կետի քանակով մինչև 3 /առանց նյութերի արժեքի/	հատ	3304.8
37		Կառավարման կոճակի կամ կառավարման կետ մոնտաժում, տեղ, կառուցատարրերի վրա, կոճակների կամ կետի քանակով մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	3994.8
38		Կառավարման կոճակի կամ կառավարման կետ մոնտաժում, տեղ, կառուցատարրերի վրա, կոճակների կամ կետի քանակով մինչև 9 /առանց նյութերի արժեքի/	հատ	4748.4
39		Կառավարման կոճակի կամ կառավարման կետ մոնտաժում, տեղ, կառուցատարրերի վրա, կոճակների կամ կետի քանակով մինչև 16 /առանց նյութերի արժեքի/	հատ	6938.4
40		Մագնիսային գործարկիչի մոնտաժում, կառուցատարրերի վրա, հոսանքը մինչև 40Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	4557.6
41		Մագնիսային գործարկիչի մոնտաժում, կառուցատարրերի վրա, հոսանքը մինչև 100Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	6270
42		Մագնիսային գործարկիչի մոնտաժում, կառուցատարրերի վրա, հոսանքը մինչև 160Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	6538.8
43		Ձեռքի գործարկիչի մոնտաժում, ընդհանուր նշանակման, կառուցատարրերի վրա, հոսանքը մինչև 25Ա /առանց նյութերի արժեքի/	հատ	3253.2
44		Ունիվերսալ պայթյունապաշտպանված փոխարկիչի տեղադրում, տեղակայված կառուցատարրերի վրա, սեկցիաների քանակը մինչև 4 /առանց նյութերի արժեքի/	հատ	5023.2
45		Ունիվերսալ պայթյունապաշտպանված փոխարկիչի տեղադրում, տեղակայված կառուցատարրերի վրա, սեկցիաների քանակը մինչև 8 /առանց նյութերի արժեքի/	հատ	5833.2
46		Ունիվերսալ պայթյունապաշտպանված փոխարկիչի տեղադրում, տեղակայված կառուցատարրերի վրա, սեկցիաների քանակը մինչև 14 /առանց նյութերի արժեքի/	հատ	7587.6
47		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 10քմմ, սեղմիչների քանակը մինչև 4 /առանց նյութերի արժեքի/	հատ	3459.6
48		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 10քմմ, սեղմիչների քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	4930.8
49		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 16քմմ, սեղմիչների քանակը մինչև 4 /առանց նյութերի արժեքի/	հատ	5166
50		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 16քմմ, սեղմիչների քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	6418.8
51		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 35քմմ, սեղմիչների քանակը մինչև 4 /առանց նյութերի արժեքի/	հատ	6097.2
52		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա մալուխների համար, կտր. մինչև 35քմմ, սեղմիչների քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	7614
53		Մետաղական պատյան ներանցումները և էլեկտրասարքավորումները պաշտպանելու համար /առանց նյութերի արժեքի/	կգ	148.8
54		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա ստուգիչ մալուխների և հաղորդալարերի համար, սեղմիչների քանակը մինչև 10 /առանց նյութերի արժեքի/	հատ	5179.2
55		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա ստուգիչ մալուխների և հաղորդալարերի համար, սեղմիչների քանակը մինչև 16 /առանց նյութերի արժեքի/	հատ	6358.8
56		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա ստուգիչ մալուխների և հաղորդալարերի համար, սեղմիչների քանակը մինչև 20 /առանց նյութերի արժեքի/	հատ	7191.6
57		Սեղմակների տուփի տեղադրում կառուցատարրերի վրա ստուգիչ մալուխների և հաղորդալարերի համար, սեղմիչների քանակը մինչև 32 /առանց նյութերի արժեքի/	հատ	9584.4
58		Հրահանգապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, առանց կարգավորիչ սարքի, տեղակայված մետաղական հիմքերի վրա, շղթաների քանակը մինչև 2 /առանց նյութերի արժեքի/	հատ	3247.2
59		Հրահանգապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, առանց կարգավորիչ սարքի, տեղակայված մետաղական հիմքերի վրա, շղթաների քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	4983.6
60		Հրահանգապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, ներկառուցված կարգավորիչ սարքով, տեղակայված մետաղական հիմքերի վրա, շղթաների քանակը	հատ	3948

		մինչև 2 /առանց նյութերի արժեքի/		
61		Հրահանգաապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, ներկառուցված կարգավորիչ սարքով, տեղակայված մետաղական հիմքերի վրա, շղթաների քանակը մինչև 8 /առանց նյութերի արժեքի/	հատ	8114.4
62		Հրահանգաապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, ներկառուցված կարգավորիչ սարքով, տեղակայված մետաղական հիմքերի վրա, շղթաների քանակը մինչև 24 /առանց նյութերի արժեքի/	հատ	20025.6
63		Հրահանգաապարատի տեղադրում, բռնցքային, կարգավորող, ներկառուցված կարգավորիչ սարքով, ձեռքի շարժաբերով, տեղակայված կառուցատարրերի վրա, շղթաների քանակը մինչև 24 /առանց նյութերի արժեքի/	հատ	46382.4
64		Հրահանգահսկիչ սարքի տեղադրում, ձեռքի ղեկավարմամբ, հպակային, տեղակայված կառուցատարրերի վրա, զանգված մինչև 15կգ, շղթաների քանակը մինչև 6 /առանց նյութերի արժեքի/	հատ	6298.8
65		Հրահանգահսկիչ սարքի տեղադրում, ձեռքի ղեկավարմամբ, հպակային, տեղակայված կառուցատարրերի վրա, զանգված մինչև 15կգ, շղթաների քանակը մինչև 12 /առանց նյութերի արժեքի/	հատ	8253.6
66		Հրահանգաապարատի տեղադրում, ձեռքի ղեկավարմամբ, անհպակային մինչև 12 արտանցիչներ միացման համար, տեղակայված կառուցատարրերի վրա, զանգված մինչև 15կգ /առանց նյութերի արժեքի/	հատ	8006.4
67		Հրահանգահսկիչ բռնցքային, հաստատուն կամ փոփոխական հոսանքի, հոսանքը մինչև 63Ա, տեղակայված կառուցատարրերի վրա, /առանց նյութերի արժեքի/	հատ	7161.6
68		Գազակարգավորման և գազավերլուծման ապաբևեռիչ տվիչով, լարման կայունացման ու սնուցման վահանակի (բլոկի) տեղադրում	լր	36524.4
69		Կաթսայատան երեքից ավել սարքավորումների համատեղ աշխատանքի ավտոմատացման համակարգի վահանակի (բլոկի) տեղադրում	լր	116053.2
70		Կաթսայի և գազայրիչի համատեղ աշխատանքների գործարկում և կարգաբերում	լր	156912
71		Գազայրիչային սարքի (սարք սարքավորումների) մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 120խմ/ժ ապամոնտաժում /կազմաքանդումը կիրառել բոլոր սարք սարքավորումների մոնտաժմանը 0,4 գործակցով, գ=0,4 /մոնտաժում*0,4=/	հատ	12967.2
72		Վերանորոգման բրիգադի, նյութերի և գործիքների տեղափոխում ավտոտրանսպորտով 5-30 կմ-ի համար /ներառյալ վերադարձը/	լր	7100.0
73		Ամեն հաջորդ 1 կմ-ի համար ավելացնել	լր	71.0
74		Ավտոմատացված գազայրիչի գազի կարգավորման 220Վ, Φ50 տրամաչափի էլ. մագնիսական փականի տեղադրում	լր	606114.8
75		Ավտոմատացված գազայրիչի գազի կարգավորման 220Վ, Φ40 տրամաչափի էլ. մագնիսական փականի տեղադրում	լր	538768.7
76		Ավտոմատացված գազայրիչի գազի կարգավորման 220Վ, Φ25 տրամաչափի էլ. մագնիսական փականի տեղադրում	լր	336730.4
77		Ավտոմատացված գազայրիչի գազի կարգավորման 220Վ, Φ15 տրամաչափի էլ. մագնիսական փականի տեղադրում	լր	195303.7
78		Ավտոմատացված գազայրիչի ղեկավարման N 811 ֆունկցիոնալ բլոկի տեղադրում	լր	47142.3
79		Ավտոմատացված գազայրիչի ղեկավարման N 790 ֆունկցիոնալ բլոկի տեղադրում	լր	23571.1
80		Ավտոմատ գազայրիչի բարձր լարման ռելեի տեղադրում	հատ	511830.3
81		Ավտոմատացված գազայրիչի ղեկավարման N811 ֆունկցիոնալ բլոկի սեղմակաշարի կաղապարի տեղադրում	հատ	4714.2
82		Ավտոմատացված գազայրիչի ղեկավարման N790 ֆունկցիոնալ բլոկի սեղմակաշարի կաղապարի տեղադրում	հատ	4714.2
83		Ավտոմատացված գազայրիչի 1.1կՎտ հզորությամբ օդամուղի տեղադրում	լր	80815.3
84		Ավտոմատացված գազայրիչի Φ50 տրամաչափի գազի ֆիլտրի տեղադրում	հատ	47142.3
85		Ավտոմատացված գազայրիչի Φ40 տրամաչափի գազի ֆիլտրի տեղադրում	հատ	33673.0
86		Ավտոմատացված գազայրիչի գազի ճնշման տվիչի տեղադրում	հատ	36366.9
87		Ավտոմատացված գազայրիչի օդի ճնշման տվիչի տեղադրում	հատ	36366.9
88		Ավտոմատացված գազայրիչի ջերմաստիճանային տվիչի տեղադրում	հատ	47142.3
89		Ավտոմատացված գազայրիչի 15 կՎտ հզորության բարձր լարման բլոկի տեղադրում	լր	49836.1
90		Ավտոմատացված գազայրիչի ֆոտոտվիչի տեղադրում	հատ	44448.4
91		Ավտոմատացված գազայրիչի ղեկավարման 230Վ, 0.25Ա, 60ՎԱ, 15կՎ, 40մԱ տիպի տրանսֆորմատորի տեղադրում	հատ	101019.1
92		Ջրի մակարդակի տվիչի տեղադրում	հատ	56570.7
93		Ավտոմատացված գազայրիչի իոնիզացիոն տվիչի տեղադրում	հատ	30305.7
94		Ավտոմատացված գազայրիչի բռնկման էլեկտրոդի տեղադրում	հատ	47142.3
95		Ավտոմատացված գազայրիչի թերմոստատի տեղադրում	հատ	24244.6
96		Գազի Φ40, Φ50 ռետինե խողովակի տեղադրում	հատ	37713.8
97		Գազի Φ25, Φ32 ռետինե խողովակի տեղադրում	հատ	23571.1
98		400 x 500 չափերի պահարանային վահանակի տեղադրում	հատ	43101.5
99		600x400x200 չափերի անփոշանցիկ էլ. վահանակի տեղադրում	հատ	48489.2
100		250x200x200 չափերի անփոշանցիկ էլ. վահանակի տեղադրում	հատ	33673.0
101		Ավտոմատացված գազայրիչի միջանկյալ ռելեյի տեղադրում 10Ա	հատ	4040.8
102		Էլ. անջատիչի տեղադրում 220 Վ	հատ	7408.1
103		Հպարկիչի տեղադրում 220 Վ	հատ	3771.4

104		Եռաֆազ սխեմայում ֆազի բացակայության պաշտպանող սարքի տեղադրում	լր	29632.3
105		20 x 20 չափերի պլաստմասե տուփի տեղադրում	հատ	1616.3
106		Տարբեր գույնի լուսարձակող դիոդների տեղադրում	հատ	673.5
107		Ձայնային ազդանշանի տեղադրում 220Վ	հատ	7408.1
108		Ժամանակային ռելեյի տեղադրում 10վրկ	հատ	16836.5
109		Էլ. մագնիսի տեղադրում 220Վ	հատ	26265.0
110		Սեղմակաշարի տեղադրում	տուփ	3500.0
111		Ավտոմատացված գազայրիչի ավտոմատ փոխարկիչի տեղադրում	հատ	6500.0
112		Անջատիչ կոճակի տեղադրում	հատ	1850.0
113		30 x 30 մետաղական անկյունակի մոնտաժում	մ	2350.0
114		Φ15, Φ25 պլաստմասե ծալքավոր խողովակի մոնտաժում մալուխի համար	մ	425.0
115		Տեղադրել ավտոմատ ղեկավարման բլոկ "Կայծ"	հատ	161630.6
116		Տեղադրել ազդանշանային ղեկավարման բլոկ	հատ	43101.5
117		Ապամոնտաժել ավտոմատ ղեկավարման բլոկ	հատ	22500.0
118		Տեղադրել երկաստիճան ավտոմատ փական	հատ	69500.0
119		Տեղադրել նախնական բռնկման փական	հատ	31500.0
120		Տեղադրել էլեկտրոդ հսկիչ ԿԷ	հատ	10775.0
		Ընդամենը		4,665,327

Ծանոթագրություն

1 Ծառայությունները մատուցվելու են հանրապետության ողջ տարածքում, (ՀՀ ՊՆ զորամասերում) ԿՇ և ԱԲՎ կողմից տրվող հայտերի հիման վրա՝ հաստատված օրացուցային պլան-գրաֆիկով:

2 Սույն ծառայությունների համար պլանավորված առավելագույն գինը կազմում է 5 000 000 ՀՀ դրամ:

3 Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները փոխհատուցվում են ըստ 2020թ.-ի թիվ 11 ինֆորմացիոն տեղեկագրի և/կամ/ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի, կիրառելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

4 Նյութերը, պատրաստվածքներն ու սարքավորումները ձեռք են բերվում կատարող կազմակերպության կողմից՝ բացառապես վերանորոգման և սպասարկման ծառայություններում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

5 Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա պետք է կիրառել տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի մարզային գործակիցները՝ ըստ ՀՀ կառավարության 23,06,11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի:

6 Սույն ծառայությունների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրացուցային օր:

Հավելված N 2
ԳՀԾՁԲ-21-10/10-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/հ	CPV	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում			
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 24.12.2021թ.	Ընդամենը
1	50531200/2	էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	1,500,000	3,000,000	5,000,00	5,000,00

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

«Ջերմգազշին» ՍՊԸ-ի տնօրեն

Վ.ՔՈՉՈՒՆՑ

Հավելված 3
ԳՀԾՁԲ-21-10/10-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրվագ գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԳՀԾՁԲ-21-10/10-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն